



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 03/21**

29.01.2021թ.

ք. Երևան

ՀՀ վարչական դատարանը, նախագահությամբ դատավոր Ռաֆիկ Խանդանյանի (այսուհետ՝ Դիմող) թիվ ՎԴ/7873/05/20 վարչական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածին՝ այնքանով, որքանով ոստիկանության իրավասու ծառայողի կողմից անհետաձգելի միջամտության որոշումն անհապաղ կայացնելուց որևէ բացառություն չի նախատեսվում:

«Անհապաղ» բառն հայերենում նշանակում է իսկույն, անմիջապես, հետևաբար՝ Դիմողի կարծիքով արդարացված է վարչական մարմինների պատճառաբանությունն առ այն, որ վարույթի իրականացումը ենթադրյալ բռնության կիրառման վերաբերյալ իրազեկվելուց հետո խիստ սեղմ ժամկետներում է սահմանափակված, մինչդեռ երբեմն առկա փաստերի համակցությունն ու ապացույցների ամբողջականությունը տալիս է հնարավորություն անհապաղ եզրափակել վարչական վարույթը, իսկ երբեմն բազմակողմանի քննության համար անհրաժեշտ են ապացույցների համակցություն և այլ իրավական գործողություններ, մինչդեռ դրանք անհնարին է իրականացնել անհապաղ ժամկետում: Բացի այդ, Դիմողը գտնում է, որ Օրենքում բռնության հասկացության որոշ տեսակների համար սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքով հատկորոշված արարքներ, որոնց պարզումը երկարատև գործընթաց է և փաստորեն ստացվում է, որ վարչական

մարմինը վարչական վարույթում պետք է իրականացնի քրեական գործի քննություն, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի հատկանիշները պարզելու և փաստելու համար, քանզի այն պարտադիր պայման է անհետաձգելի միջամտության որոշման կայացման համար: Մի կողմ թողնելով հասկացությունների բովանդակությունը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված իրավաչափությունը՝ Դիմողն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ փաստացի օրենսդիրը մի կողմից իրավասու մարմնին պարտավորեցրել է անհետաձգելի պաշտպանության միջոցը կիրառել անհապաղ՝ նպատակ հետապնդելով կանխել իրավունքի հնարավոր խախտումը կամ դադարեցնել այն, մյուս կողմից՝ պարտավորեցրել է իրականացնել պատշաճ վարչարարություն և որոշում կայացնել միայն բռնության փաստը հաստատելուց հետո: Նման պայմաններում Դիմողը գտնում է, որ տեսականորեն գրեթե անհնար է բացառել այն դեպքերը, երբ գործի օբյեկտիվ քննության նկատառումներից ելնելով՝ հնարավոր չէ անհապաղ կայացնել անհետաձգելի միջամտության որոշում՝ առանց որոշակի փաստական հանգամանքների բացահայտման:

Միևնույն ժամանակ, եթե վարույթի իրականացման անհապաղությունը մեկնաբանվի որպես բռնությունը կիրառելու փաստը բացահայտելուց անմիջապես հետո, այսինքն՝ օբյեկտիվ բազմակողմանի քննություն իրականացնելուց հետո, ապա այն կհանգեցնի նախ նման միջոցի կիրառման անհրաժեշտության անհեթեթության, բացի այդ, կարող է հանգեցնել մարդու իրավունքների կոպիտ խախտման, քանզի անհետաձգելի միջամտության որոշումը նպատակ է հետապնդում ընտանեկան բռնության անմիջական վտանգի դեպքում անհապաղ ապահովել անձի անվտանգությունը: Նման պայմաններում իրավակիրառ պրակտիկայում Օրենքի նորմերի գործողությունն ստացել է ձևական բնույթ, չի իրագործվում Օրենքի ընդունման նպատակը: Դիմողը նշում է, որ իր կողմից սեղմ ժամկետում ուսումնասիրված դատական պրակտիկան ցույց է տվել, որ Օրենքի ընդունումից ի վեր ՀՀ վարչական դատարանում ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշումների վիճարկման վարույթի 8 գործեր են առկա (ներառյալ՝ սույն գործը), որոնցից 7 գործով առկա են վերջնական դատական ակտեր և դրանցից առնվազն 6 գործով անվավեր են ճանաչվել վիճարկվող ակտերը և դատական ակտերում հիմնական պատճառաբանությունները հանգում են վարչական մարմնի կողմից ընթացակարգային նորմերի խախտմանը, գործի օբյեկտիվ քննություն

չիրականացնելուն և վարչական ակտի հիմնավորվածության պահանջի խախտմանը: Նման հանգամանքներում խախտվում է ոչ միայն ենթադրյալ բռնություն գործադրած անձի պատշաճ վարչարարության իրավունքը, այլ նաև բռնության ենթարկված անձի իրավունքը, քանզի անհապաղ ժամկետում իրականացված անփույթ վարչարարության արդյունքում դատական կարգով վերացվում է ենթադրյալ բռնության ենթարկված անձի պաշտպանության նպատակով ընդունված վարչական ակտն ու վտանգում անձին:

Միննույն ժամանակ, Դիմողը փաստում է, որ անգամ գործի դատական քննության ընթացքում է անհնարին հաղթահարել առաջացած խնդիրն ու խուսափել իրավունքների խախտումից, քանզի անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումը դատարանը քննում և գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 4-րդ մաս), և տեսականորեն անհնարին է նման ժամանակահատվածում ապացույցների ձեռքբերումն ու կողմերին այդպիսիք ներկայացնելու հնարավորություն ընձեռելը, բացի այդ, ապացուցման բեռը վիճարկման հայցով կրում է վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետ): Նման պայմաններում վարչական մարմինն է պարտավոր իրականացնել պատշաճ վարչարարություն՝ գործին անհրաժեշտ փաստակազմի և ապացույցների ձեռքբերմամբ, որպեսզի դատարանն էլ օրենքով նախատեսված սեղմ ժամկետում իրականացնի դատական վերահսկողությունը վարչարարության նկատմամբ:

Ամբողջ շարադրվածի հիմքով, Դիմողի գնահատմամբ, անհետաձգելի միջամտության որոշման անհապաղ կայացման պահանջն այնքանով, որքանով չի նախատեսում որևէ բացառություն վարույթի օբյեկտիվ և բազմակողմանի քննության համար, հակասում է ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված անձի պատշաճ վարչարարության իրավունքին:

### **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Այսպես, Դիմողը վիճարկում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում

համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածին՝ այնքանով, որքանով ոստիկանության իրավասու ծառայողի կողմից անհետաձգելի միջամտության որոշումը անհասպաղ կայացնելուց որևէ բացառություն չի նախատեսվում:

Օրենքի վիճարկվող 7-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը հետևյալն է.

*1. Եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհասպաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:*

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի համաձայն՝

*1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:*

*2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:*

*3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:*

Այսպես, Օրենքը կանոնակարգում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության կազմակերպա-իրավական հիմքերը, սահմանում է ընտանիքում բռնության հասկացությունը, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների լիազորությունները, պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկությունների իրավական պաշտպանության առանձնահատկությունները:

Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է ընտանիքում բռնության տեսակները, համաձայն որի այդպիսիք են հանդիսանում՝

1) ֆիզիկական բռնություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.

2) սեռական բռնություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները.

3) հոգեբանական բռնություն՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը.

4) տնտեսական բռնություն՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը.

5) անտեսում՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ

տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Օրենքի 7-րդ հոդվածը վերաբերում է բռնություն կիրառած ընտանիքի անդամի նկատմամբ անհետաձգելի միջամտության որոշման կայացման էությանը, ժամկետներին, նման որոշմամբ կիրառվող սահմանափակումների տեսակներին և այլն:

Վիճարկվող նորմի մեկնաբանմամբ կարելի է փաստել, որ անհետաձգելի միջամտության որոշում կայացվում է, երբ՝

1. ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին,

2. նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

Օրենքի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները.

1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը.

2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր.

3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը.

4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը: Այս սահմանափակումը կիրառելիս որոշման մասին իրազեկվելու պահին ընտանիքում բռնություն գործադրած

անձի տիրապետման տակ զենք լինելու դեպքում նա այն անհապաղ հանձնում է որոշումը կայացրած ոստիկանության ծառայողին.

5) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ:

Հարկ է նկատել, որ Օրենքը, ֆիզիկական և սեռական բռնության տեսակի հասկացությունները բացահայտելիս հղում է կատարում ՀՀ քրեական օրենսգրքին: Ստացվում է՝ ոստիկանության իրավասու անձի կողմից բռնության կիրառման վերաբերյալ հաղորդում ստանալիս անհրաժեշտ է պարզել բռնություն կիրառելու փաստը՝ ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխան: Այսինքն՝ անհետաձգելի միջամտության որոշման կայացման համար ոչ թե անհրաժեշտ է բռնություն կիրառելու վերաբերյալ հիմնավոր կասկած, անմիջական վտանգ կամ այլ փաստակազմ, այլ պարտադիր է բռնություն կիրառված լինելը և առկա լինի հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին: Այսինքն՝ անհետաձգելի միջամտության որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթում օրենսդիրը վարչական մարմնի առաջ դրել է պարտականություն՝ հաստատված համարել բռնության կիրառման փաստը, ապա՝ միջոցի կիրառումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2 հոդվածի 1-ին մասի ուժով օրենքի I բաժնի գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա: Օրենքի 1-ին բաժնի 10-րդ հոդվածը, որպես վարչարարության սկզբունք, սահմանում է «հավաստիության կանխավարկածի» սկզբունքը: Վերջինիս նպատակը վարչական մարմինների և անձանց միջև փոխվստահությունն է: Հավաստիության կանխավարկածի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Ինչ վերաբերում է վարչական վարույթի ընթացքում ապացուցման բեռի բաշխմանը, ապա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով գործում է նույն օրենքի 43 հոդվածը: Վերջինս վարչական վարույթում ապացուցման պարտականության բաշխում է կատարում՝ ելնելով նրանից, թե վարույթի ընթացքում ընդունվող ակտը վերջինիս համար բարենպաստ, թե ոչ բարենպաստ փաստական հետևանքներ է ունենալու: Ըստ այդմ, վարչական վարույթում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ վերջինիս համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, և վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների դեպքում:

Միաժամանակ, օրենսդիրը պարտավորեցնում է վարչական մարմինն որոշումն ընդունել անհապաղ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ», հետևաբար վարույթի անհապաղ իրականացման պահանջն ինքնին խնդրահարույց չէ: Սակայն, մյուս կողմից իրավասու անձը, ով քննում է ընտանիքում բռնության վերաբերյալ գործ, ունի պարտականություն օրենսգրքով սահմանված կարգով բացահայտել բռնության կիրառման փաստը և միայն դրա հաստատման պարագայում է առաջանում համապատասխան միջոցի կիրառման հնարավորությունը, իսկ դրա իրականացման համար վարույթի ժամկետներ նախատեսված չեն և օրենսդիրն այն սահմանափակել է անհապաղ իրականացնելով, այսինքն՝ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելիս, սահմանափակված լինելով այն անհապաղ կայացնելու ինպերատիվ պահանջով, ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձինք զրկված են վարչարարությունը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ իրականացնելու հնարավորությունից, որի արդյունքում չեն բացառվում դեպքերը, երբ նպատակ ունենալով պաշտպանել ընտանիքի մի անդամի կյանքն ու առողջությունը՝ ոտնահարվի ընտանիքի մյուս անդամի՝ սահմանադրորեն երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը: Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ նման որոշումները վիճարկելու դեպքում ճնշող մեծամասնության դեպքում դրանք անվավեր են ճանաչվում՝ պատշաճ վարչարարություն իրականացված չլինելու հիմքով: Ստացվում է, որ Օրենքը նման դեպքերում դառնում է աննպատակ և անարդյունք:



2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության մեջ առաջին անգամ ամրագրվեց պատշաճ վարչարարության իրավունքը: Պատշաճ վարչարարության սահմանադրական մակարդակով կարգավորումը ենթադրում է ոչ միայն պատշաճ վարչարարության իրավունքի ամրագրումը, այլև սահմանադրական երաշխիքների և իրավական պաշտպանության սահմանադրական մեխանիզմների միջոցով դրանց պաշտպանությունը:

Պատշաճ վարչարարության էությունը վարչարարության ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման ու պաշտպանության և վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեության արդյունավետության ապահովման գործառույթների միաժամանակյա ապահովումն ու դրանց միջև փոխադարձ հավասարակշռվածության հաստատումն է: Պատշաճ վարչարարության իրավունքը համընդգրկուն իրավական ինստիտուտ է, որը բովանդակում է մի շարք սուբյեկտիվ իրավունքներ, իրավական երաշխիքներ ու սկզբունքներ և վարչարարությանը ներկայացվող որակական չափանիշներ, որոնք ուղղված են մի կողմից ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ վարչարարության հետ առնչվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորված իրացմանն ու պաշտպանությանը, իսկ մյուս կողմից՝ վարչարարության արդյունավետության ապահովմանը:

Վիճարկվող նորմի գործողության պարագայում փաստորեն ստեղծվում են այնպիսի իրավիճակներ, երբ վարչական մարմինը գործնականում չունի ողջամիտ ժամանակ՝ վարչական գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի քննարկելու և հիմնավորված վարչական ակտ կայացնելու (կազմելու) համար, իսկ մյուս կողմից սահմանափակվում է վարչական ակտի հասցեատիրոջ՝ սահմանադրորեն երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը: Արդյունքում, հնարավոր է և համապատասխան պաշտոնատար անձի կողմից արդարացի կայացված լինի անհետաձգելի միջամտության որոշումը, սակայն անձի՝ պատշաճ վարչարարության իրավունքի խախտման հիմքով այդ որոշումը դատարանի կողմից անվավեր ճանաչվի՝ արդյունքում վտանգի տակ դնելով բռնության ենթարկված անձի կյանքն ու առողջությունը:

Ինչպես իրավացորեն նկատել է Դիմողը, առկա իրավակիրառ իրողությունն ու իրավանորմի մեկնաբանությունը հակասում են ոչ միայն մարդու սահմանադրա-իրավական իրավունքին, այլ նաև հանգեցրել են Օրենքի գործողության աննպատակահարմարության և մարդու կյանքի ու առողջության վտանգման: Պրակտիկայում վարչական մարմինների կողմից անհապաղությունը մեկնաբանվում է որպես ենթադրյալ բռնության կիրառման վերաբերյալ իրազեկվելուց հետո ամենասեղմ ժամկետում անհետաձգելի միջամտության որոշման կայացում: Վարչական մարմինները վարույթն իրականացնելիս սահմանափակվում են հիմնականում ենթադրյալ բռնության ենթարկված անձի տված բացատրությունով, հնարավորության դեպքում նաև՝ ենթադրյալ բռնություն կիրառած անձից բացատրություն վերացնելով: Վարչական մարմինները պատճառաբանում են, որ տեսականորեն որևէ այլ ապացույցի ձեռքբերումն անհնարին է՝ պայմանավորված օրենսդրի՝ անհապաղ որոշում կայացնելու պահանջով, թեպետ ինքնին ապացույցների ձեռքբերումն անհնարին չէ և կարող է ձեռքբերվել միայն որոշակի ժամանակահատվածում: Նշվածի արդյունքում ստեղծվել է իրավիճակ, երբ անհետաձգելի միջամտության որոշումը վարչական մարմնի կողմից ընդունվում է ենթադրյալ բռնության ենթարկված անձի հայտարարությունը գնահատելով, ինչն հանգեցնում է անձի պատշաճ վարչարարության իրավունքի խախտման: Մասնավորապես, վարույթային առանձնահատկություններից ելնելով՝ թերևս արդարացված է լսումներ չանցկացնելու փաստը, սակայն անաչառ, արդարացի, օբյեկտիվ և բազմակողմանի գործի քննության իրականացման բացառումն ակնհայտորեն հակասում է պատշաճ վարչարարության իրավունքին, և Սահմանադրությամբ չի նախատեսվել վարչարարության օբյեկտիվության և բազմակողմանիության սահմանափակման հնարավորություն, ավելին՝ այն նախատեսված չէ նաև որևէ այլ իրավական ակտով, քանզի բուն վարչարարությանը ներկայացվող պահանջներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է և բոլորի առկայությունը պարտադիր է գործընթացը վարչարարություն որակելու համար: Նման պայմաններում օրենսդրի կողմից վարույթն իրականացնելու համար նախատեսված անհապաղության պահանջն՝ առանց բացառության, հանգեցրել է վարչարարության բազմակողմանիության, օբյեկտիվության և անաչառ քննության անհիմն և չարդարացված սահմանափակման:

Խնդիրը հնարավոր չէ լուծել նաև դատական կարգով, քանի որ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումը դատարանը քննում և գործն ըստ

էության լուծող դատական ակտը կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո 48 ժամվա ընթացքում (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 4-րդ մաս): Տեսականորեն անհնարին է նման ժամանակահատվածում ապացույցների ձեռքբերումն ու կողմերին այդպիսիք ներկայացնելու հնարավորություն ընձեռելը: Այսինքն՝ չեն բացառվում դեպքերը, երբ նախ խախտվի անձի՝ պատշաճ վարչարարության իրավունքը, այնուհետև՝ արդար դատաքննության իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, փաստելով, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի ընդունմամբ պետությունը նպատակ ունի ապահովել ընտանիքի՝ որպես հասարակության բնական ու հիմնական բջջի հատուկ պաշտպանությունը, ձևավորել ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկվածների անվտանգության և պաշտպանության, նրանց իրավունքների և օրինական շահերի ապահովման համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր, ապահովել ընտանիքի անդամների անվտանգությունը և նպաստել ընտանիքում համերաշխության վերականգնմանը, կանոնակարգել ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ուղղությամբ պատասխանատու մարմինների գործունեությունը, ապահովել ընտանիքում բռնության ենթարկվածներին հոգեբանական, նյութական և սոցիալական աջակցության տրամադրման և նրանց սոցիալական վերականգնման համար պատասխանատու մարմինների գործունեության համար իրավական հիմքեր, կարևորելով անձի՝ սահմանադրորեն երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը, վարչական մարմինների կողմից օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի վարչարարության իրականացման անհրաժեշտությունը, կարծում ենք, որ անհրաժեշտ է ստեղծել ավելի արդյունավետ, ճկուն և գործող մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք կապահովեն անձանց՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները, չեն ստեղծի կազուսային իրավիճակներ, աննպատակ և անարդյունավետ չեն դարձնի գործող կարգավորումները, կապահովվեն այն նպատակները, որոնց համար ընդունվել է Օրենքը:

#### **Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին»

օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածին՝ այնքանով, որքանով ոստիկանության իրավասու ծառայողի կողմից անհետաձգելի միջամտության որոշումը անհապաղ կայացնելուց որևէ բացառություն չի նախատեսվում, ինդրահարույց է:

 Recoverable Signature

*Համակարգող՝*

**X** Lyudvik Davtyan

*Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169